ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մայիսի 2024 թվականի N 761 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2323-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՎԵՈԼԻԱ ՁՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով և 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Խոր Արմատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (այսուհետ՝ ընկերություն) ձեռք բերել Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի 1-ին փողոց 31/4 հասցեում գտնվող՝ 17.49 քառ. մետր մակերեսով շինությունը 0.13285 հա հողամասով՝ համապատասխանաբար 802791 դրամ և 3780945 դրամ շուկայական արժեքներով, Կողբ գյուղի 1-ին փողոց 31/5 հասցեում

գտնվող՝ 17.48 քառ. մետր մակերեսով շինությունը 0.10157 հա հողամասով՝ համապատասխանաբար 802332 դրամ և 2890708 դրամ շուկայական արժեքներով, Կողբ գյուղի 1-ին փողոց 31/6 հասցեում գտնվող՝ 14.42 քառ. մետր մակերեսով շինությունը 0.11289 հա հողամասով՝ համապատասխանաբար 661878 դրամ և 3212879 դրամ շուկայական արժեքներով և Կողբ գյուղի 1-ին փողոց 31/7 հասցեում գտնվող՝ 338.16 քառ. մետր մակերեսով շենքեր-շինությունները 0.23634 հա հողամասով՝ համապատասխանաբար 25555943 դրամ և 13126141 դրամ շուկայական արժեքներով (31/4, 31/5, 31/6 և 31/7 հասցեի շենքեր-շինությունների և հողամասերի համապատասխան արժեքների մեջ ներառված չէ ավելացված արժեքի հարկը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ N 05032021-11-0008, N 05032021-11-0027, N 05032021-11-0028 7 N 24022023-11-0059):

2. Ընկերությանը հատկացնել գումար՝ սույն որոշման 1-ին կետով ձեռք բերվող շենքեր-շինությունների և հողամասերի (այսուհետ՝ գույք) գործարքից առաջացող հարկային պարտավորությունները՝ 10166723 դրամ ավելացված արժեքի հարկը և 9150051 դրամ շահութահարկը վճարելու նպատակով:

3. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, փոփոխություններ, լրացումներ, N 1 հավելվածի N 3 աղյուսակում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածների:

4. Սույն որոշման 1-ին կետով ձեռք բերված գույքը որպես պետական սեփականություն ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին (այսուհետ՝ ջրային կոմիտե):

5. Ջրային կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշմամբ սահմանված գումարների հատկացումից հետո երկամսյա ժամկետում ապահովել գույքի ձեռքբերման և անշարժ գույքի իրավունքների պետական գրանցման հետ կապված գործընթացները.

2) գույքի ձեռքբերման գործընթացն ավարտելուց և գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելուց և այն ջրային կոմիտեին ամրացնելուց հետո եռամսյա ժամկետում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել համապատասխան համաձայնագիր՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքը՝ 2016 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ու «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված՝ «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակջրմուղկոյուղի» և «Նոր ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի շրջանակներում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության հանձնելու նպատակով.

3) գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անվամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելուց և այն ջրային կոմիտեին ամրացնելուց հետո ձեռնարկել համապատասխան գործընթացներ ձեռք բերված գույքի հողամասերի նպատակային նշանակությունը սահմանված կարգով ջրային նպատակային նշանակության հողերի փոփոխելու ուղղությամբ:

6. Առաջարկել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանն ապահովել սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ և դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերի կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ